Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2023թ. հոկտեմբերի 13-ին Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **<u>Անունը, ազգանունը</u>**

Հակոբ Վարդանյան

2. **<u>Զբաղեցրած պաշտոնը</u>**

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **<u>Գործուղման վայրը և ժամկետները.</u>**

2023թ. հոկտեմբերի 13, Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել)

4. **<u>Հրավիրող կողմը.</u>**

Եվրոպական միության արտաքին գործողությունների եվրոպական ծառայություն (ԱԳԵԾ):

5. **<u>Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).</u>**

Մասնակցել ՀՀ-ԵՄ էներգետիկայի, տրանսպորտի, շրջակա միջավայրի, կլիմայի գործողության և քաղաքացիական պաշտպանության հարցերով ենթակոմիտեի հերթական նիստին

6. Քննարկված թեմաները.

Հանդիպման ընթացքում քննարկվել են կլիմայի փոփոխության, շրջակա միջավայրի, էներգետիկայի և միջուկային անվտանգության, տրանսպորտի, բնակչության պաշտպանությանն առնչվող հարցերը: Մասնավորապես, կլիմայի փոփոխության, տրանսպորտի և բնակչության պաշտպանության հարցերը քննարկվեցին ԵՄ կողմի նախագությամբ, իսկ էներգետիկայի և շրջակա միջավայրին առնչվող հարցերը՝ հայկական կողմի նախագահությամբ:

Քննարկվել է CEPA (ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերություն) համաձայնագրով Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը, Եվրոպական կողմի նախաձեռնությամբ քննարկվել է նաև Հայկական Ատոմային էլեկտրակայանի շուրջ կատարվող աշխատանքները և դրանց ընթացքը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Քննարկումների ընթացքում եվրոպական կողմը ներկայացրել է բարձրացված հարցերի վերաբերյալ ԵՄ օրենսդրական նոր փոփոխությունները, ԵՄ աջակցության մեխանիզմները, հայկական կողմի համապատասխան պատասխանատուներն իրենց հերթին ներկայացրել են բարձրացված հարցերի վերաբերյալ նախորդ նիստին հաջորդած ժամանակահատվածում կատարված միջոցառումները, ընդունված որոշումները, ինչպես նաև ՀԸԳՀ իրականացման ուղղությամբ կատարված աշխատանքները:

Քննարկվել է Սևծովյան մալուխին Հայաստանի պաշտոնական միանալու հարցը, որի շրջանակներում հայկական կողմը խնդրել է Եվրոպական կողմի աջակցությունը՝ առանց նախապայմանների Հայատանի հուշագրին միանալը:

8.<u>Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.</u>

Հանդիպման ընթացքում մշակվել է հանդիպման արձանագրության նախագիծ, որը Կողմերը կհաձայնեցնեն դիվանագիտական խողովակներով:

Ստորագրված փաստաթղթեր չկան:

9. <u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.</u>

Եվրոպական կողմը առաջարկել է հետևել 2019թ. ԱԷՄԳ-ի կողմից Հայկական Ատոմային էլեկտրակայանում անցկացրած թեստի արդյունքներով հայտարարված թերությունների վերացմանը, որին ի պատասխան հայկական կողմը տեղեկացրել է, որ թերությունների մի մասը զրոյացված է, իսկ մյուս մասն ընթացքի մեջ է:

Ներկայացվել է որ մինչև 2025թ. ավարտը Հայաստանում կլինի էներգետիկայի ոլորտին վերաբերող նոր օրենսդրություն, որը համահունչ կլինի ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության կողմից նախատեսված եվրպական երկրների չափանիշներին:

Հետագա աշխատանքների վերաբերյալ առաջարկությունները և դրանց իրականացման ժամկետները սահմանվելու են Կողմերի միջև համաձայնեցված հանդիպան արձանագրությամբ (Operational conclusions):

10. <u>Ստորագրությունը, ամսաթիվը</u>

18.10.2023